Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի Ա.Աղեկյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում սննդի ոլորտում գործունեության կազմակերպման իրավունքի տրամադրման համար

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի Ա.Աղեկյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում սննդի ոլորտում գործունեության կազմակերպման իրավունքի տրամադրման համար:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) մրցույթի մասնակցության հայտ (Ձև 2),
2) հիմնադրի փաստաթղթերի և պետական գրանցման վկայականի պատճենները, պետական գրանցման համարը (իրավաբանական անձանց համար), իսկ ֆիզիկական անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

«ՀՀ Լոռու մարզի մարզի Տաշիրի Ա.Աղեկյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում սովորողների սննդի կազմակերպման համար վարձակալության տրամադրվող գույքի վարձավճարի շուկայական գնահատված արժեքը՝ ըստ գնահատման մասին հաշվետվության կազմում է.

Ամսական վարձակալության շուկայական արժեքը՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում 2025 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 14:00-ից մինչև ժամը 17:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն (հասցե՝ ք. Վանաձոր, Հայքի հրապարակ 1), հեռախոսահամար՝ (0322) 40161, էլ.փոստի հասցե՝ lori.krtutyun@mta.gov.am :

ՁԵՎ N 2

ՀԱՅՏ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՆՆԴԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

_____

(հայտը ներկայացնող անձի անունը, ազգանունը (անվանումը)

1. Ծանոթանալով «____» _____202__ թ-ին կայանալիք

_____ ՊՈԱԿ-ում սննդի ոլորտում

(հաստատության անվանումը)

գործունեության կազմակերպման իրավունքի տրամադրման մրցույթի վերաբերյալ հրապարակված տեղեկություններին՝ ցանկանում եմ մասնակցել մրցույթին:

2. Վավերապայմաններ՝

_____

(իրավաբանական անձի գտվելու վայրը (ֆիզիկական անձի բնակության վայրը), հեռախոսահամարը)

3. Կից ներկայացնում եմ.

հիմնադրի փաստաթղթերի և պետական գրանցման վկայականի պատճենները, պետական գրանցման համարը (իրավաբանական անձանց համար), իսկ ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

Հայտատու _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«____» _____202__թ.